գործով: Բոլորին հրահանգ եւ ուղղութիւն էր տալիս ինքը թագաւորը: Նա իր անձնավստահ ձեռնարկութեան ե՛ւ հիմնադիրն էր, ե՛ւ ճարտարապետը: Երկար մաքառելով ջրի հետ, վերջապէս յաղթեցին նրան: Ամբարտակը վեր բարձրացաւ մակերեւոյթից, աւելի քան հինգ կանգուն:

Ժամանակի ականատես պատմաբանը, Թոմայ Արծրունին, այդ շէնքը աշխարհի հրաշալիքներից մէկն է համարում եւ, համեմատելով նրան Շամիրամի ամբարտակի հետ, աւելի ահեղ, աւելի գերազանց է գտնում: Բաբելոնի մեծագործ թագուհին հիմնեց իր ամբարտակը ցամաքի վրայ եւ մի մեծ գետի ընթացքը դարձրեց դէպի Վանայ հովիտը: Իսկ Արծրունի թագաւորը իր ամբարտակի հիմքը դրեց ջրի յատակի վրայ եւ ծովի մի մասը ցամաք դարձրեց:

Յիշեալ ամբարտակի վրայ բարձրացրեց նա կղզու շրջապարիսպը, որը հինգ ձիարշաւի տարածութեամբ շրջապատ ունէր: Այդ շրջապարիսպը, պատմաբանի խօսքերով, էր՝ հրաշակերտ, ահեղակերպ, ամրացրած բարձր, լայնանիստ բուրգերով եւ զարդարած նոյնպէս բարձը, գեղեցիկ աշտարակներով: Աշտարակները անկիւնաւոր էին, խորանանման ձեւ ունէին, հարթ իբրեւ տախտակ: Նրանց մէջ կային սենեակներ, դահլիճներ, ուր երբեմն իր որդիների եւ ազատագունդ դրանիկների հետ ուրախութիւն էր վայելում արքան:

Հարկաւոր էր կղզուն մի նաւահանգիստ: Այդ անհրաժեշտութեան մէջ եւս թագաւորի անզուսպ եռանդը անճար չմնաց: Նա կտրեց ծովի մի մասը եւ, ահագին պատնէշներ բարձրացնելով ջրի միջից, հիմնեց մի ընդարձակ, արհեստական նաւահանգիստ: Ալեքսանդր մեծի արհեստական նաւահանգիստը Մակեդոնիայում շատ նոսաստ է գտնում պատմաբանը, յիշեալ նաւահանգստի հետ համեմատելով: Դէպի այդ նաւահանգիստն էին բացւում կղզու շրջապարիսպի ծանր, երկաթեայ դռները:

Այդպէս, կղզին չորեքկողմից բուրգերով, աշտարակներով եւ թանձր շրջապատով ամրացնելուց յետոյ նրան մի ահռելի բերդի ձեւ տոեց: Արհեստի հետ զուգապատշաճ էին եւ բնական ամրութիւնները: Կղզու միջնավայրից բարձրանում էր մի ապառաժ, որ նրա գագաթն էր կազմում: Այդ ապառաժի կողքերի վրայ հիմնեց արքան իր բարձրադիր պալատները, որ նայում էին դէպի ընդարձակ ծովը: Պալատների մօտ կանգնած էին նրա գանձերի շտեմարանները, զէնքերի մթերանոցները եւ պաշարների մեծամեծ ամբարանոցները:

Երբ բոլոր շինութիւնները վերջացած էին, թագաւորը հրատարակեց այդ կղզին իբրեւ ապաստանի քաղաք: Թշնամիների կողմից եկած ամէն հեն